

**ԱՇԽԱՐՀԱՔԱՐԻ ՀՈՒՆՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱ
ԸՄԲՈՒՆՈՒՄԸ ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ
(18-րդ դարասկզբից մինչև 19-րդ դ. 30-40-ական թթ.)**

Աշխարհաբար կոչված լեզվական նոր սկզբնավորվող որակի առաջին քերականությունը հեղինակել է հոլանդացի հայագետ Յոհան Յոախիմ Շրյոդերը /Սքրոդերը/: Նրա՝ լատիներեն գրված «Արամեան լեզուի գանձ» աշխատության մեջ մի ոչ ծավալուն հատված «Քաղաքացիական հայերենի ուրվագիծ» խորագրի տակ զետեղված է աշխարհաբար նոր ձևավորված լեզվի քերականական իրողությունների քննությունը:

18-րդ դ. սկզբներին դեռևս տիրապետող էր տասը հոլովի համակարգի տեսությունը: Այս տեսակետն էր դավանում նաև Շրյոդերը: Ժողովրդական կամ քաղաքացիական հայերենը համարելով հին հայերենի պատմական զարգացման արդյունքում ստացված լեզվական նոր որակ՝ այնուհանդերձ, նա այն կարծիքին էր, որ վերջինս պահպանել է նախնական տասը հոլովներից միայն հինգը՝ թերևս ձևակազմական որոշ փոփոխություններով:

Ի տարբերություն գրաբարի՝ նոր լեզուն, նրա կարծիքով, նախամասնիկներով /նախդիրներով/ հոլով չի կազմում: Եվ քանի որ այդպես է, որոշ հոլովներ ձևով նույնանում են, և այդ արդյունքում ստացվում են 5 անփոփոխականեր՝ 5 հոլովներ: Նկատի ունենալով որոշ հոլովների ձևական նույնությունը՝ նա յուրովի շարակարգով է ներկայացնում դրանք: Ձևով նույնական հոլովները դնում է նույն տողի վրա, որով ստացվում է հետևյալ շարակարգը՝ ըստ տողերի՝ *1/ անվանական, հայցական և կոչական, 2/ սեռական և տրական, 3/ առողական և պատմական, 4/ ներգոյական, 5/ գործիական և շրջակայական*:

Անդրադառնալով այս հարցին՝ Ալ. Մարգարյանը այն կարծիքն է հայտնում, թե Շրյոդերը իբր աշխարհաբարին նույնպես հատկացնում է տասը հոլով¹: Այս դրույթը հիմնավորում է հոլանդացի նշանավոր հայագետի այն ասույթով, թե «Անունների հոլովները տասն են» /" Casus Nominum sunt decem". հիշ. աշխ., էջ 56/: Շրյոդերը իսկապես այդպիսի բան ասում է, բայց դա վերաբերում է հին հայերենին և ոչ թե քաղաքացիական կոչված լեզվին:

Գոյականին հատկացնելով հոգնակիակազմության 2 ձև՝ *-եր* կամ *-ներ* և *-անք*, որոշյալ առում՝ *ս, դ, մ* հոդերով և անորոշ առում՝ եզակի թվում *մին*, հոգնակիում *մին քանի* կամ *մեկ քանի* Շրյոդերը ներկայացնում է անվան

հոլովական հարացույցը, որն ընդգրկում է ըստ ձևի՝ հինգ անփոփոխակ՝ հինգ տողերի վրա:

Ի տարբերություն անվան հոլովական հարացույցի՝ նա դերանվան հարացույցը կազմում է յոթ հոլովի համակարգով:

Վերը նշվածից կարելի է բխեցնել հետևյալը:

1. Շրյոդերը աշխարհաբարի հոլովների տարբերակման հիմքում դնում է ձևակազմական հատկանիշը, այդ թվում՝ զրոյական ձևույթը. ըստ այդմ՝ բառի ուղիղ ձևին հակադրում է մյուս թեք ձևերը:
2. Որոշակի պատկերացում ունի անվան հիմքակազմիչ մասի շեշտափոխական հնարավոր հնչյունափոխության մասին /*ծուկն* > ձկնի/:
3. Ընդունելի և օրինաչափ է համարում հոլովական զուգաձևությունները /ձկանէ, ձկնէ, ձկնից/:
4. Անվանական հոլովումից հստակորեն տարբերակում է դերանվանական հոլովումը, որի բնորոշ հատկանիշը արմատի փոփոխությունն է՝ սուալետիվիզմը /ես – իմ – ինձ/:
5. Հիմքում ունենալով ձևաբանական, ավելի ստույգ՝ ձևակազմական հատկանիշը՝ անվան հոլովական հարացույցը կազմում է *հինգ հոլովի* սկզբունքով, դերանվանական հարացույցը՝ *յոթ հոլովի* սկզբունքով:
6. Արձանագրում է դերանվանական հոլովման մեջ արդեն իսկ /դեռևս 18-րդ դարի սկզբներին/ ուրվագծվող զուգահեռ, այսպես ասած՝ կարճ և երկար ձևերը /*ինձանէ – ինձնէ, մեզանէ – մեզնէ*:/:
7. Դերանվան հոլովման հարացույցում հայցականը պահում է իբրև առանձին հոլով, քանի որ ավանդույթի ուժով այն դեռևս կազմվում էր նաև *զ* նախդրով /*զիս, զմեզ*/, թեև տիրապետող արդեն *ինձ* և *մեզ* ձևերն էին, որոնք, ինքնին հասկանալի է, նույնպես առկա են հարացույցում:
8. Ուրվագծում է բացառական հոլովի երկու ձևերը՝ է և ից վերջավորություններով, որոնցից մեկը դար անց պետք է հատկացվեր արևելահայերենին /*ձկնից, ինձնից, մեզնից*/, մյուսը՝ արևմտահայերենին /ձկանէ կամ ձկնէ, ինձնէ, մեզնէ/:
9. Միջին հայերենում թեև սակավ, բայց արդեն իսկ շրջանառվող ում ձևությով կազմությունները հաստատուն կերպով մտցնում է հարացույցի մեջ՝ որպես ներգոյական հոլով:
10. Շրյոդերը աներկբայորեն հանդիսանում է աշխարհաբարի *անվան հինգ հոլովի* և *դերանվան յոթ հոլովի տեսության* հիմնադիրը:

Այս տեսությունը հետագայում վիճարկվեց ու մերժվեց շատերի կողմից, բայց որովհետև գիտական էր ու ճշմարտապես էր արտացոլում նոր

հայերենի հոլովական համակարգի էությունը, խիստ կենսունակ դուրս եկավ և իր ընդհանուր սկզբունքներով տիրապետող մնաց նաև արդի հայ քերականագիտության մեջ:

Երկրորդ հեղինակը, որ քննության նյութ է դարձրել աշխարհաբարի, տվյալ դեպքում՝ նրա արևմտյան տարբերակի քերականությունը, Մխիթար Սեբաստացին է:

1727 թ. Վենետիկում նա հրատարակում է «Դուռն քերականութեան Աշխարհաբառ լեզուին հայոց» աշխատությունը, այդ թվում՝ նրա հոլովման համակարգը քննվում է առանձին գրքով՝ գրաբարից ու միջին հայերենից անկախ, ապա կարելի է ասել, որ Մ. Սեբաստացու հիշյալ աշխատությունը նոր հայերենի առաջին քերականությունն է:

Իր աշխատության առաջին մասում, որ շարադրված է թուրքերեն և հասցեագրված մայրենին չիմացող թուրքախոս հայերին, Սեբաստացին քննել է արևմտահայերենի անվան և դերանվան հոլովները: Երկրորդ մասը, ցավոք, ցարդ մնում է անտիպ:

Հեղինակը երկու խոսքի մասերին էլ հատկացրել է գրաբարում և միջին հայերենում ավանդաբար ընդունված վեց հոլովները՝ *ուղղականը, սեռականը, տրականը, հայցականը, բացառականը և գործիականը*:

Արևմտահայերենը, իր ձևավորման վաղ շրջանից սկսած, ներգոյականի համար հատուկ ձև չի ունեցել, ուստի և այդ հոլովը չի արտացոլվել հոլովական համակարգի մեջ:

Իր աշխատության առաջին հատվածում Սեբաստացին հետապնդել է զուտ գործնական նպատակներ, տեսական հարցեր չի շոշափել: Ներկայացրել է հոլովման և խոնարհման առավել կարևոր յուրահատկությունները: Սեբաստացու պատկերած աշխարհաբարի հոլովական համակարգը այնքան էլ անթերի չէ: Տակավին մշակված չեն հոլովների ձևավորման ու տարբերակման հստակ սկզբունքները, սահմանազատված չեն հիմքակազմիչ և հոլովակազմիչ տարրերը, հակասություններ կան որոշ հոլովների եզակիի և հոգնակիի ձևակազմության միջև: Կան և ուրիշ կարգի պակասավոր արտահայտություններ: Նշենք մի քանի սկզբունքային այլ դիտարկումներ ևս:

1. Տրականը սեռականից տարբերակում է *մ* հոդով /սեռ. *ազարակի, հաւի, ազարակներու, հաւերու, տր. ազարակին, հաւին, ազարակներուն, հաւերուն*/: Սա շատ կարևոր սկզբունք է, որ հեղինակը կիրառել է հիշյալ երկու հոլովների տարբերակման համար: Այս սկզբունքը գիտականորեն ճիշտ է և արդարացված է արդյոք, դա այլ հարց է, որին կանոդադառնանք հետագա շարադրանքի ընթացքում: Այժմ միայն ընդգծենք, որ այս սկզբունքը հետա-

գայում ընդունվեց շատերի կողմից: Այն արդեն մեր օրերում որդեգրեցին Ար. Ղարիբյանը, Գ. Սևակը, Աշ. Աբրահամյանը, Ալ. Մարգարյանը, Վ. Քոսյանը և ուրիշներ: Այսպիսով՝ Սեբաստացին հայ քերականագիտության մեջ առաջինն էր, որ *նը/* հոդին հատկացրեց լրացուցիչ գործառույթ՝ այն ընկալելով *նաև որպես հոլովակերտ տարր*:

2. Հոգնակի բացառականը կազմում է տրականի նման /տր. - *ազարակներուն, -հաւերուն*, բաց. - *ազարակներուն, - հաւերուն*/:

Միջին հայերենում արդեն իսկ ձևավորված էր բացառականի *է* ձևույթը, որը կցվում էր կա՛մ ուղղականի բառաբնին, կա՛մ սեռական-տրականի բառաձևին /հմտ. *ամսէ, մահուէ* կա՛մ *մահէ, տիրոջէ*/: Միջին հայերենում հոգնակի բացառականը կարող էր նաև ձևով նույնանալ հոգնակի սեռական-տրականի հետ: Այդ դեպքում տարբերակիչ ձևույթի դեր էր կատարում *ի/յ/* նախդիրը /հմտ. սեռ. - տր. - *աղջկներու /ոյ/, գիշերներու /ոյ/* և բաց. *յ/* աղջկներու */ոյ/, /ի/ գիշերներու /ոյ/*:

Սեբաստացին միջինհայերենյան կազմությունները սովորույթի ուժով մուծում է նոր հայերենի մեջ, մինչդեռ այստեղ բացառականը այլևս չէր կարող ձևով նույնանալ սեռական-տրականի հետ՝ իր սեփական ձևակազմությունը՝ *է* և *ից* վերջավորությունները ունենալու պատճառով:

3. Հայցականը թե՛ եզակիում և թե՛ հոգնակիում անհոդ է: Մնում է անհասկանալի, թե այդ հոդը ի՞նչ դեր ունի. տարբերակում է հայցականը ուղղականի՞ց, ինչպես տրականը՝ սեռականից: Այդ դեպքում հոդը, ինչպես տրականի դեպքում, վերածվում է հոլովակերտ ձևույթի: Եթե սոսկ առկայացման կարգի ցուցիչ է, ապա ինչու՞ նույն ցուցիչը չունեն եզակի և հոգնակի ուղղական հոլովները: Երկու դեպքում էլ հարցերը մնում են անպատասխան և լուծման կարոտ:

4. *Ով* դերանվան եզակի տրականի համար տալիս է *ում* ձևը, իսկ սեռականի տեղը թողնում է թափուր /նշում է գծիկով՝ *-/*, այնինչ միջին հայերենում *ում* ձևը հաստատապես ձևավորվել էր նաև որպես սեռականի արտահայտություն: *Որ* դերանվան եզակի բացառականի տեղը նույնպես թափուր է թողնում, մինչդեռ *որմէ* ձևը վաղուց կար վկայված միջին հայերենի մատենագրության մեջ և չէր կարող անցած չլինել նոր հայերենին:

5. *Որ* դերանվան սեռականի և տրականի դիմաց դնում է *օրու* ձևը, փոխարեն՝ *որու*: *Օրու*-ն ակնհայտորեն բարբառային երանգ ունի:

Այս և նման ձևերը վկայում են, որ Սեբաստացին դեռևս վերջնականապես չէր կողմնորոշվել համեմատաբար ընդհանուր տարածում ունեցող խոսակցական լեզվի, տարածական առավել մեծ ընդգրկում ունեցող բարբառ-

ների և նոր-նոր ձևավորվող ու քայլ առ քայլ գրական մշակման ենթարկվող աշխարհաբարի կառուցածների տակավին չհամակարգված խառն ու երերուն երևույթների միջև: Այնուհանդերձ, նա մնում է առաջին հայ քերականը, որ հատուկ քննության նյութ դարձրեց աշխարհաբարի արևմտյան տարբերակի քերականությունը, ընդհանուր գծերով միշտ ներկայացրեց նրա հոլովման /նաև խոնարհման/ համակարգը, որը մասնակի բարեփոխումներով պահպանվում է նաև այսօր:

Էդ. Աղայանի ձևակերպմամբ՝ Սեբաստացու «Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց» աշխատությունը «արժեքավոր է [նաև] պատմական տեսակետից՝ իբրև աշխարհաբարի առաջին քերականություն»²:

«Աշխարհաբարի առաջին քերականություն» ասելով՝ Աղայանը, անշուշտ, նկատի ունի առանձին գրքով հրատարակված լինելու հանգամանքը, քանի որ նոր հայերենի առաջին քերականությունը իրապես Շրյոդերինն է, որը առանձին գրքով հրատարակված չէր և, ինչպես նշեցինք, կազմում էր նրա՝ գրաբարի քերականության քննությանը նվիրված «Արամեան լեզուի գանձ» աշխատության մի փոքրիկ հավելվածը միայն:

Շրյոդերի ու Սեբաստացու աշխատություններից հետո ավելի քան մեկ հարյուրամյակ քաղաքացիական կոչված հայերենը դուրս մնաց հայագետների ուշադրությունից: Այդ շրջանում՝ 18-րդ դ. սկզբներից մինչև 19-րդ դ. 30-40-ական թթ., աշխարհաբարը դանդաղորեն, բայց հաստատուն քայլերով ու անշեղորեն ընդարձակում էր իր տիրապետության սահմանները: Միջին հայերենը և մանավանդ գրաբարը հետզհետե նահանջում էին աշխարհաբարի հաղթարշավի առաջ՝ չնայելով դիմադիր հոսանքին:

Ահա այս շրջանում՝ 19-րդ դ. 30-ական թթ. սկսած՝ հայ մշակույթի կենտրոնական դեմքն է դառնում Խ. Աբովյանը՝ պաշտպանելով աշխարհաբարի դատը:

1838 թ. նա գրել է իր նշանավոր «Նախաշավիղ կրթութեան ի պէտս նորավարտից» աշխատությունը³:

«Նախաշավիղի» երկրորդ մասում քննության նյութ է դարձրել գրաբարի և աշխարհաբարի քերականությունները: Սա, ըստ էության, հին և նոր հայերենների առաջին զուգադրական քերականությունն է:

Գրաբարի հատվածը շարադրելիս հենվել է Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» և Սալլամբյանի «Քերականութիւն գրաբար լեզուիս հայոց» աշխատությունների վրա: Աշխարհաբարը քննելիս ձեռքի տակ է ունեցել Շրյոդերի «Արամեան լեզուի գանձ» աշխատությունը:

Արժւյանը «Նախաշավիղի» երկրորդ մասում անդրադարձել է նաև աշխարհաբարի հոլովման համակարգին, որը ևս քննել է՝ գրաբարի հետ համեմատելով: Նախ կասկածի տակ է առել Չամչյանի և Սալլանթյանի հոլովական տեսությունները, որոնց համաձայն գրաբարը պահում էր տասը հոլով: Աշխարհաբարին հատկացնում է յոթ հոլով: Հոլովների տարբերակման հիմքում դնում է երկու հատկանիշ.

1. Յուրաքանչյուր անփոփոխակի *հիմնական* կամ *առաջնային* իմաստը: Այսպես, օրինակ, սեռականի մասին ասում է. «Յույց է տալիս, թե մեկ բան ունի ա, գործօրինակ՝ Աշակերտի գիրքը⁴». գործիականը նշում է այն առարկան, «ընչով որ մեկ գործ կատարում են», ներգոյականով դրվում են այն բառերը, որոնք «մեկ գործողության տեղը և ժամանակն են ցույց տալիս և կարելի է հարցնել՝ ումնու՞մ, ընչու՞մ»⁵:

2. Յուրաքանչյուր անփոփոխակի շարահյուսական հիմնական կիրառությունը, որ բխում է հիմնական իմաստից, ինչպես՝ *ուղղական*. - ենթակա. «*Երեխայն* ծիծաղեցաւ». *սեռական*.- հատկացուցիչ. «*Երեխայի* հայրը հիվանդ ա». *տրական*.- հանգման խնդիր. «*Երեխային* ասացի». *հայցական*. - ուղիղ խնդիր. «*Երեխային* սիրում են». *բացառական*.- անջատման խնդիր. «*Երեխայիցն* ստացա». *գործիական*. - «*Երեխայովն* էս բանը արի». *ներգոյական*. - տեղի պարագա. «*Երեխայումը* շատ շնորհք կա»⁶:

Ակնհայտ է, որ Արժւյանը հոլովների ձևաբանական իմաստները և շարահյուսական հիմնական կիրառությունները անթերի է ներկայացրել: Դրանք սկզբունքորեն անցել են հետազայում շարադրված բոլոր քերականությունների ու հետազոտությունների մեջ՝ ընդհուպ մինչև մեր օրերը:

Իբրև բնորոշ հատկանիշ՝ հարկ է նշել, որ Արժւյանը որոշիչ հոդ է հատկացրել բոլոր հոլովներին՝ բացի սեռականից: Այս կառույցը հատուկ է Արարատյան բարբառին և նրա տարածական ճյուղավորումներից մեկին՝ Երևանի խոսվածքին: Արժւյանը, սակայն, Երևանի խոսվածքը իր «մաքուր» տեսքով չէ, որ ներկայացրել է, այլ վերցրել է գրականացված տարբերակը: Խոսքը վերաբերում է ներգոյականի *ուժ* թեքությին, որ թեև սակավ, բայց արդեն իսկ կար միջին հայերենի մատենագրական աղբյուրներում: Արարատյան բարբառում այն հնչում էր և հնչում է *ըմ*: Արժւյանը չի ասում՝ *երեխայումը*, այլ *երեխայումը*, որը ավելի մոտ է գրական աշխարհաբարին /թեև հարցը ձևակերպում է *ընչու՞մ* ձևով/: Ավելի ուշ արևելահայերենում ամծմանիչ գոյականների հոլովական հարացույցից ներգոյականը ընկավ և այժմ այլևս չկա:

«Նախաշավիղում» Արժւյանը ներկայացրել է նաև որոշ դերանունների /ես, դու, սա/ եզակիի և հոգնակիի ձևերը, որոնք աշխարհաբարի դերանվան

հոլովական համակարգի պատկերն են: Աբովյանը տուրք է տալիս ավանդական, տվյալ դեպքում՝ գրաբարի քերականությամբ: Գրաբարի հոլովական հարացույցի մեջ առկա հայցական հոլովը ինքնաբերաբար տեղափոխում է նոր հայերենի հոլովական հարացույցի մեջ, թեև այստեղ այն այլևս ձևով չէր զանազանվում տրականից, իսկ անվան հոլովման դեպքում՝ տրականից բացի, նաև ուղղականից:

Այս հարացույցները միաժամանակ բնորոշվում են ևս մի կարևոր հատկանիշով, որ յուրովի ներկայացնում են Աբովյանի տեսական ըմբռնումների գործնական իրականացումը: Մեծ լուսավորիչը ժողովրդական կենդանի խոսքի, «հարիր հազարի» լեզվի աննկուն պաշտպանն էր ու ջատագովը: Դա արտացոլված է նրա տեսական բնույթի մի շարք հարցադրումներում ու մեկնություններում, անուղղակի կերպով՝ նաև հարացույցում: Այսպես. հայտնի է, որ դերանվանական, մասամբ նաև որոշ անունների /հայր, մայր, եղբայր, քույր և այլն/ հոլովները /փակագծված անունները ներգոյական չունեն/ կազմվում են ոչ թե ուղղականի, այլ տրականի հիմքից: Դերանունների հոլովման ժամանակ *-ից, -ով, և -ում* վերջավորություններից առաջ մուծվում է *մ* կամ *ան* տարրը, որով գոյանում են *-մից* կամ *-անից, -նով* կամ *-անով, -նում* կամ *-անում* բաղադրյալ վերջավորությունները, ինչպես՝ *ինձնից* // *ինձանից, ինձնով* // *ինձանով* և այլն:

Առաջիններն ավելի գրական կանոնարկված ձևեր են, երկրորդները՝ ավելի ժողովրդախոսակցական⁷:

Ահա այս երկրորդ՝ ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ ձևերն են տեղ գտել ևս. Աբովյանի կազմած՝ դերանվան հոլովական հարացույցում: Հեղինակը ավելորդ անգամ հաստատում է իր հակումը կենդանի լեզվին, կենսունակ կառուցածների հանդեպ:

Աբովյանը քննել է անվան հոլովումը ևս: Հետևելով Շրյոդերին՝ նա նոր հայերենին հատկացնում է անվան միայն մեկ հիմնական հոլովում՝ *ի* հոլովումը: Տարբերակման հիմքում դնում է եզակի սեռականը /և տրականը/: Մյուս բոլոր ձևերը համարում է *շեղումներ* եզակի և հոգնակի սեռականից: Այդ շեղումները, ըստ հեղինակի, ունեն հետևյալ արտահայտությունները. 1/ այգի-այգու, 2/ քահանայ-քահանեք-քահանեքանց, 3/ տուն-տան, դուռն-դռան, գարունք-գարնան, ամառը-ամառվան, օր-օրվան, 4/ քիր-քվեր, քվերտանք-քվերտանց, 5/ աղջիկ-աղջկերք-աղջկերանց, 6/ տղեն-տղերքը-տղերանցը, մարդ-մարդքերք-մարդքերանց, /ծառեն/-ծառեքը-ծառեքանցը, 7/ *-ություն* ածանցով բաղադրված բառերը, ըստ Աբովյանի, հոլովվում են, ինչպես հին հայերենում հոլովվում էին

եզակի գործիականում */-եամբ/*, հոգնակի ուղղական */ութիւնք/*, սեռական և տրական հոլովներում */-ութեանց/*, «որպես և ունեն լեզվագետ հայազգիք»⁸:

Խ. Արովյանի մասին վերը շարադրվածից կարելի է բխեցնել հետևյալը:

1. Արովյանը իր աշխատանքը գրել է իբրև դասագիրք՝ մատաղ սերնդին նոր հայերենի քերականությունը ուսուցանելու համար: Գրել է ժամանակի ամենաառաջադեմ մեթոդաբանական հայեցակարգով, իր արտահայտությամբ՝ «այնպիսի մարդկանց սկզբունքներով ու հայացքներով, ինչպիսիք են Նիմայերը, Կրուուզեն և Կամպեն, որոնք մանկավարժական աշխարհի փայլող աստղերն էին»⁹: Նման բովանդակությամբ ու սկզբունքներով շարադրված աշխատանք հայ իրականության մեջ առաջին անգամ է հրապարակ հանվել:

2. Թեև գրել է հին հայերենի և աշխարհաբարի զուգադրական քերականություն, սակայն նոր հայերենի քերականությունը, այդ թվում նրա հոլովական համակարգը հետազոտել է գրաբարից անկախ՝ կենդանի լեզվի գործող ու կենսունակ օրինաչափությունների հիման վրա:

3. Հոլովների դասակարգման հիմքում դրել է հոլովական իմաստը: Յուրաքանչյուր հոլովական իմաստի արտահայտության համար պարտադիր պայման չի համարել առանձին ու ինքնուրույն ձևի առկայությունը, որով ստացվել են նույնանուն հոլովներ. անվան հոլովական հարացույցում ձևով նույնացել են սեռականն ու տրականը, ուղղականն ու հայցականը, դերանվական հոլովման հարացույցում՝ տրականն ու հայցականը:

4. Գրաբարի քերականությունների հետևողությամբ աշխարհաբարին հատկացրել է *սեռական* և *հայցական* հոլովները, որոնք անվան հոլովական հարացույցում ինքնուրույն ձևավորում չունեն:

5. Անվան հոլովական հարացույցում, սեռականից բացի, մյուս բոլոր հոլովներին հատկացրել է որոշյալության քերականական կարգը, ինչը բնորոշ է Արարատյան բարբառին: Գրական արևելահայերենը 1830-ական թթ. վերջերից այդ հոլովները հետզհետե կազմում էր առանց *ը* կամ *մ* հոդերի, իսկ 50-60-ական թթ.՝ հյուսիսափայտյան շրջանում, արդեն տիրապետող են դառնում մաքուր անհոդ ձևերը, որոնք վերջնականապես հաստատվում են նոր գրական արևելահայերենում:

6. Անձնական դերանունների հոլովական հարացույցը կազմելիս նախապատվությունը տվել է ժողովրդախոսակցական ձևերին. նշել է *ինձանից*, *ինձանով*, *ինձանում* և նման ձևերը, չի նշել *ինձնից*, *ինձնով*, *ինձնում* ձևերը, որոնք բնորոշ են գրական արևելահայերենին:

7. Անվան հոլովման տիպերի դասակարգման հիմքում դնում է եզակի սեռականի կադապարումը և ընդունում է մեկ հիմնական կանոնավոր հոլովում, որն է -ի-ն, մյուսները համարում է շեղումներ եզակի և հոգնակի սեռականից:

8. Նյութի ըմբռնման տեսական հիմքով, շարադրամքի մեթոդաբանական սկզբունքներով, նոր, թարմ ու ինքնատիպ հարցադրումներով «Նախաշավիղը» գիտական սխրագործություն էր, որ ազդարարում էր հայ քերականագիտական մտքի զարգացման նոր մակարդակը՝ համահունչ ու ներդաշն ժամանակի ոգուն, եվրոպական իմաստասիրական, հոգեբանական, մանկավարժական ու լեզվաբանական նորագույն ըմբռնումներին ու սկզբունքներին: Բայց ափսոս, որ այս սխրագործությունը «չկարողացավ խաղալ այն դերը, որին նա արժանի էր»¹⁰: «Նախաշավիղի» երկրորդ մասի ողիսականը երկար տևեց: Այդ մասը լույս աշխարհ եկավ շատ ուշ՝ 1862 թ. միայն:

Ծանոթագրություններ

¹ Ալ. Մարգարյան, Հայերենի հոլովները, Երևան, 2000, էջ 86:

² Էդ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. Ա, Եր., 1958, էջ 123:

³ Ցարդ վերջնականապես ճշտված չէ «Նախաշավիղի» առաջին մասի գրության և տպագրության թիվը: Ոմանք տպագրության թիվը դնում են 1838 /տես Խ. Արովյան, Նախաշավիղ, Եր., 1940, Ռ. Ջարյանի «Երկու խոսքը» և Ծանոթագրությունները, էջեր III – VIII/, ոմանք՝ 1839-40 /տես Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Եր., 1967, էջ 4/: Ընդհանրապես «Նախաշավիղի» գրելու համաձայնքների, առաջին տպագրության, ըստ որում հեղինակի կենդանության օրոք լույս տեսած միակ գրքի, ամբողջ տպաքանակի կորստյան /թե՛ ոչնչացման/, նրա բովանդակության, երկու՞, թե՛ մեկ տարբերակի գոյության, բուն իսկ վերնագրի հայերեն արտահայտության հետ կապված շատ իրողություններ այլևայլ վարկածների տեղիք են տվել: Իրականությունը, սակայն, թաղված է մնում պատմության մշուշոտ ծալքերի մեջ և սպասում է հետագա բացահայտումների:

Նշենք վարկածներից մեկը:

Իբր եղել է երկու «Նախաշավիղ»: Առաջինը, որ ընդգրկել է գերմաներեն առաջաբանը և հայերեն այբբենարանը, տպագրվել է հեղինակի օրոք: Նրանից մնացել է միայն 2 օրինակ, մեկը՝ Պ.Պռոշյանի մոտ, մյուսը՝ հեղինակի առաջին կենսագիր Տեր-Ազարյանի: Առաջին «Նախաշավիղը» 2 մասից է բաղկացած եղել, և երկրորդ մասը ընդգրկվել է գրաբարի և աշխարհաբարի զուգադրական քերականությունը: Սա 1838 /39-40/-ին չի տպագրվել, այլ 1862-ին: Երկրորդ «Նախաշավիղի» ճակատագիրը անհայտ է:

⁴ Խ. Արովյան, հիշ. աշխ., էջ 125:

⁵ Տես ն. տ.:

⁶ Տես ն. տ.:

⁷ Այս մասին տես նաև Մ. Ասատրյանի «Ժամանակակից հայոց լեզու», Չևաբանություն, Եր. 1983, էջ 183, Ալ. Մարգարյան, Հայոց լեզվի քերականություն. Չևաբանություն, Եր. 2004, էջ 291:

⁸ Խ. Արովյան, հիշ. աշխ., էջ 128:

⁹ Խ. Արովյան, հիշ. աշխ., էջ XLVIII:

¹⁰ Գ. Ջահուկյան, Ժամ. հայերենի հոլովման համակարգը, Եր., 1967, էջ 4: